| | |
|---|---|
| **Հաստատված է**<br>եվրոպական Համալսարանի գիտական խորհրդի *2019* թվականի օգոստոսի *29*-ի թիվ *10* նիստում,<br><br>Լրամշակված է գիտական խորհրդի *2020* թվականի փետրվարի *28*-ի թիվ *14* նիստում<br><br>Լրամշակված է գիտական խորհրդի *2023* թվականի դեկտեմբերի *28*-ի թիվ *48* նիստում<br><br>Լրամշակված է գիտական խորհրդի *2024* թվականի օգոստոսի *29*-ի թիվ *52* նիստում<br><br>Ռեկտոր՝ Հ. Բիշարյան | ***Approved by***<br>*European University, Scientific Board, August 29, 2019, at Session 10.*<br><br>*Amended by the Scientific Council, February 28, 2020, at Session 14.*<br><br>*Amended by the Scientific Council, December 28, 2023, at Session 48.*<br><br>*Amended by the Scientific Council, August 29, 2024, at Session 52.*<br><br>*Rector: H. Bisharyan.* |
| ______________________________<br>(ստորագրություն, Կ.Տ./ Signature) | |
| **ԿԱՐԳ<br>ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԱԿԱԴԵՄԻԱԿԱՆ ԿՐԵԴԻՏՆԵՐԻ ԿՈՒՏԱԿՄԱՆ ԵՎ ՓՈԽԱՆՑՄԱՆ** | **ORDER<br>ON THE APPLICATION FOR THE ACCUMULATION AND TRANSFER OF ACADEMIC CREDITS OF THE EUROPEAN UNIVERSITY OF ARMENIA** |
| 1. **ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ** | 1. **GENERAL PROVISIONS** |
| 1.1. ECTS-ը համաեվրոպական միասնական համակարգ է, որը նախատեսում է բարձրագույն կրթության եվրոպական տարածքում ուսանողների ուսումնառության արդյունքների միասնական արժևորում, պաշտոնական ճանաչում և բուհից բուհ փոխանցում: | 1.1. ECTS is a unified pan-European system that provides a standardized assessment of students’ learning outcomes in higher education, ensuring formal recognition and facilitating the transfer between universities within the European Higher Education Area. |
| 1.2. Ակադեմիական կրեդիտների կուտակման և փոխանցման կարգը ՀԵՀ-ում հիմնվում է ՀՀ կառավարության 2005թ. դեկտեմբերի 27-ին ընդունած «ՀՀ բարձրագույն կրթության համակարգում կրեդիտային համակարգի ներդրման մասին» (թիվ 2307) որոշման և Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի 2007թ. հունիսի 19-ի N 588-Ա/Ք «Բարձրագույն ուսումնական հաստատություններում ուսումնական | 1.2. The order on the accumulation and transfer of academic credits at the EUA is based on the decision of the Government of the RA adopted on the 27th of December in 2005, “On the Contribution of the Credit System in the Higher Education System of RA” (No. 2307), and the exemplary order "Organization of the Credit System of Education in Higher Education Institutions" by |

| | |
|---|---|
| գործընթացի կրեդիտային համակարգով կազմակերպման» օրինակելի կարգի վրա: | the RA Minister of Education and Science on the 19th of June in 2007 (No. 588-A). |
| 1.3. Ուսանողի տարեկան լրիվ ուսումնական ծանրաբեռնվածությունը հավասար է 60 ակադեմիական կրեդիտի: | 1.3. The full educational workload for a student during the academic year is equivalent to 60 academic credits. |
| 1.4. Կրթական ծրագրի բոլոր դասընթացների համար սահմանվում են կրեդիտներ, որոնք արտահայտում են ուսանողին ներկայացվող լսարանային, արտալսարանային և ինքնուրույն աշխատանքի ուսումնական լրիվ ծանրաբեռնվածությունը: Ուսանողը վաստակում է սահմանված կրեդիտը համապատասխան դասընթացը հաջողությամբ յուրացնելու և գնահատականի դրական շեմ ապահովելու դեպքում: | 1.4. Credits are allocated to all courses in the educational program, reflecting the full workload of curricular, extracurricular, and independent work. A student earns the credit when they successfully complete the course and achieve a positive grade. |
| 1.5. Առկա ուսուցման ուսանողը յուրաքանչյուր կիսամյակում պետք է ունենա 30 կրեդիտ ուսումնական ծանրաբեռնվածություն (ներառյալ արտալսարանային և ինքնուրույն աշխատանքը), իսկ հեռակա ուսուցման ուսանողը՝ 24 կրեդիտ (ներառյալ արտալսարանային և ինքնուրույն աշխատանքը): | 1.5. A full-time student must have a study load of 30 credits per semester and a part-time student must have 24 credits (including extracurricular and independent work). |
| 2. **ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ** | **2. BASIC CONCEPTS** |
| ա) **Կարողունակությունը** գիտելիքի, ընկալման, ունակությունների և հմտությունների դինամիկ համակցություն է, որի ձևավորումը կրթական ծրագրի հիմնական նպատակն է: Այն կարող է լինել մասնագիտական (առանձնահատուկ՝ ուսման տվյալ բնագավառի համար) և ընդհանուր (անկախ բնագավառից): | a) **Competence** is a dynamic combination of knowledge, understanding, abilities, and skills, and its development is the core objective of the educational program. It can be professional (specific to a particular field of study) or general (applicable across various fields). |
| բ) **Կրթական արդյունքն** այն է, ինչ պետք է գիտենա, հասկանա և (կամ) կարողանա անել ուսանողը ուսումնառության ավարտին: Կրթական արդյունքը զուգակցվում է համապատասխան գնահատման չափանիշով, որը հնարավորություն է տալիս դատել դասընթացով սահմանված կրթական արդյունքի ձեռքբերման մասին: Կրթական արդյունքը և գնահատման չափանիշը միասին սահմանում են կրեդիտի շնորհման պահանջները: Կրթական արդյունքները պարտադիր ենթակա են գնահատմամբ: | b) **The learning outcome** specifies what a student should know, understand, and/or be able to do upon completing their studies. Each learning outcome is paired with an appropriate assessment criterion, enabling the evaluation of the course's learning outcome. Together, the learning outcome and the assessment criterion determine the credit requirements. |

| | |
|---|---|
| գ) **Դասընթացը** ուսումնական ծրագրի ամենափոքր, համեմատաբար ինքնուրույն մասն է, որի համար կրեդիտ է տրվում: Դասընթացին հատկացված կրեդիտները շնորհվում են ամբողջությամբ, այլ ոչ թե առանձին մասերով: | c) **The course** is the smallest, relatively independent part of the curriculum for which credit is awarded. Credits for the course are awarded fully, rather than in parts. |
| դ) ***ECTS* կրեդիտը** դասընթացը ավարտելու և դրա ելքային արդյունքները ձեռք բերելու համար ուսանողից պահանջվող ժամաքանակով արտահայտված ուսումնական բեռնվածքի չափման պայմանական միավոր է, որը տրվում է ուսանողին նախանշված կրթական արդյունքների դրական գնահատումից հետո: | d) **ECTS credit** is a conditional unit for student’s workload measurement, expressed in hours required to complete a course and achieve its outcomes. It is awarded to the student upon a positive assessment of the intended learning outcomes. |
| ե) ***ECTS* կրեդիտի կարևորագույն հատկանիշներն են*.*** <br>• ECTS կրեդիտով սահմանվող ուսումնական բեռնվածքը ներառում է ուսանողի լսարանային, արտալսա-րանային և ինքնուրույն իրականացվող բոլոր տեսակի ուսումնական աշխա-տանքները, այդ թվում՝ մասնակցությունը դասախոսություններին, սեմինար և գործնական պարապմունքներին, լաբորա-տոր աշխատանքներին և պրակտիկա-ներին, կուրսային և ավարտական աշխատանքների կատարումը, քննություն-ներին նախապատրաստվելը և հանձնելը, անհատական հետազոտությունը և այլն, <br>• կրեդիտը չափում է միայն ուսանողի ուսումնական բեռնվածքը և չի գնահատում դասընթացի բարդության աստիճանը, մակարդակը կրթական ծրագրում կամ ուսանողի կողմից դրա յուրացման որակը (գնահատականը), <br>• կրեդիտը ուսանողին տրվում է միայն տվյալ դասընթացով նախանշված կրթական արդյունքի գնահատման շեմային չափանիշները բավարարելուց հետո: Ուսանողը վաստակում է դասընթացին հատկացված կրեդիտների լրիվ քանակը՝ քննական արդյունքների (գնահատականների կամ թվանշանների) հետ միասին, <br>• ECTS կրեդիտը չի չափում դասախոսի ուսումնական գործու-նեության (դասավանդման) աշխատածավալը: Այն չափում է ուսումնառության ծավալը, <br>• կրեդիտը չի փոխարինում թվանշաններով ուսանողի գնահատականը, իսկ ուսանողի վաստակած կրեդիտների քանակը չի որոշվում նրա ստացած թվանշաններով, | **e) The most important features of ECTS are:** <br>• The educational workload defined by ECTS credits includes all types of learning activities performed by the student, both in-class and extracurricular, as well as independent work. This includes participation in lectures, seminars, and practical sessions, laboratory work and internships, completion of course and thesis projects, preparation for and taking exams, individual research, and so on. <br>• The credit measures only the student’s workload and does not assess the complexity of the course, the level within the educational program, or the quality of the student’s assimilation (mark). <br>• The credit is awarded to the student only after meeting the threshold criteria for the assessment of the learning outcomes specified in the course. The student earns the full amount of credits allocated for the course along with the exam results (rating units and grades). <br>• ECTS credit does not measure the lecturer's workload; it measures the volume of learning. <br>• The credit does not replace the student’s grade, and the number of credits is not determined by the grades received. |

| | |
|---|---|
| • կրեդիտը չի չափում ուսանողի ստացած գիտելիքի որակը, այն չափվում է գնահատականներով: Կրեդիտային և գնահատման համակարգերի միջև փոխադարձ ներգործության որևէ կապ չկա: | • The credit does not measure the quality of a student's knowledge; that is measured through grades. There is no mutual influence between the credit and assessment systems. |
| զ) **Կրեդիտային համակարգը** ուսումնական գործընթացի կազմակերպման, ակադեմիական կրեդիտների միջոցով ուսումնառության արդյունքների հաշվառման (արժևորման), կուտակման և փոխանցման համակարգ է, որտեղ համապատասխան որակավորման աստիճանը շնորհվում է կրթական ծրագրով սահմանված կրեդիտների անհրաժեշտ բովանդակության և քանակի ձեռք-բերումից հետո: | f) The credit system is a system for organizing the educational process, recording results (validating), accumulating, and transferring learning outcomes through academic credits. In this system, the corresponding qualification level is awarded after achieving the required content and number of credits as defined by the educational program. |
| է) **Կրեդիտների փոխանցման և կուտակման ECTS համակարգը** միասնական համաեվրոպական կրեդիտային համակարգ է, որտեղ առկա ուսուցման ուսանողի լրիվ ուսումնական բեռնվածքը 1 ուստարում գնահատվում է 60 ECTS կրեդիտ, իսկ հեռակայինը՝ 48: Այն նախատեսված է Եվրոպական բարձրագույն կրթության տարածքում (ԵԲԿՏ) ուսանողների ձեռք բերած կրթական արդյունքների արժևորման, պաշտոնական ճանաչման և բուհից բուհ տեղափոխումը դյուրացնելու համար: | g) **The ECTS Credit Transfer and Accumulation System** is a unified pan-European credit system in which the full learning load for a full-time student is assessed at 60 ECTS credits per academic year, while for part-time students it is assessed at 48 credits. It is designed to facilitate the assessment of students' educational outcomes, as well as the formal recognition and transfer of credits between universities in the European Higher Education Area (EHEA). |
| ը) **Կրեդիտների փոխանցման և կուտակման ECTS համակարգի հատկանիշներն են.**<br>• կիսամյակը, ուսումնական տարին կամ ուսումնառության լրիվ ծրագիրը հաջողությամբ ավարտելու համար ուսանողը պետք է վաստակի կրթական ծրագրով սահմանված կրեդիտների անհրաժեշտ քանակը,<br>• կրեդիտներ հատկացվում են կրթական ծրագրի՝ գնահատման ենթակա բոլոր բաղկացուցիչներին՝ դասընթացներին, պրակտիկաներին, կուրսային աշխատանքներին և ամփոփիչ ատեստավորմանը և այլն,<br>• կրթական ծրագիրը և դրա առանձին բաղկացուցիչները բնութագրող բոլոր պայմանները՝ ծրագրի նպատակը և ավարտական պահանջները, դասընթացների բովանդակությունները և հատկացված կրեդիտները, դասավանդման և գնահատման | **h) The features of the ECTS credits transfer and accumulation system are:**<br>• To successfully complete the semester, academic year, or full study program, the student must earn the required number of credits specified in the educational program.<br>• Credits are allocated to all components of the educational program that are eligible for assessment, including courses, internships, term papers, final certification and so on..<br>• All conditions characterizing the educational program and its components—such as the program's objectives, graduation requirements, course content, credits, teaching methods, and assessment |

| | |
|---|---|
| մեթոդները պետք է նախապես հրապարակվեն (տպագրվեն կամ տեղադրվեն բուհի կայքում),<br>• հավատարմագրված բուհերում և/կամ կրթական ծրագրերում ստացված կրեդիտները սկզբունքորեն փոխանցելի են բուհերի և կրթական ծրագրերի միջև, եթե դրանց կրթական արդյունքները համարժեք են,<br>• եթե կրեդիտների փոխանցման գործընթացում ներգրավված բուհերը այդ մասին կնքել են ECTS-ի պահանջներին համապատասխանող եռակողմ (ուսանող, առաքող և ընդունող բուհեր) կրթական համաձայնագիր, ապա այն ունի իրավական ուժ: | methods—must be published in advance (either in print or on the HEI's website).<br>• Credits earned at accredited universities and/or academic programs are generally transferable between HEIs and academic programs if their learning outcomes are equivalent.<br>• If the HEIs involved in the credit transfer process have established a trilateral educational agreement (between the student, home HEI, and host HEI) in accordance with ECTS requirements, then it holds legal validity. |
| ***3. ԿՐԵԴԻՏԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ*** | ***3. MAIN FUNCTIONS OF CREDIT SYSTEM*** |
| 3.1. Կրեդիտային համակարգի հիմնական գործառույթները երկուսն են՝<br>ա) կրեդիտների փոխանցում, ինչը ենթադրում է ուսումնական ծրագրի բոլոր բաղկացուցիչների արժևորում հատկացված կրեդիտների օգնությամբ և այդ կրեդիտների փոխանցման հնարավորություն,<br>բ) կրեդիտների կուտակում, ինչը ուսանողին տալիս է դասախոսի, դասընթացների ընտրության հնարավորություն և ենթադրում է կրթական կրեդիտների աստիճանական կուտակման գործընթացի առկայություն: | 3.1. The two main functions of credit system are:<br>a) Transfer of credits, which means evaluating all components of the curriculum through allocated credits and the possibility of transferring those credits.<br>b) Accumulation of credits provides students with the opportunity to choose professors and courses, allowing for a gradual accumulation of educational credits. |
| 3.2. Կրեդիտների **փոխանցման** գործառույթի հիմնական հատկանիշներն են.<br>• ուսումնական ծրագրեր, որոնց բոլոր բաղադրամասերի (դասընթացներ, կուրսային և ավարտական աշխատանքներ, պրակտիկաներ և այլն) աշխատածավալներն արտահայտված են ուսանողի լսարանային, արտալսարանային և ինքնուրույն աշխատանքն արտահայտող ECTS կրեդիտներով,<br>• կրեդիտներով արտահայտված կրթական արդյունքների փոխադարձ ճանաչման և որոշակի թվով կրեդիտների՝ ծրագրից ծրագիր փոխանցման (տեղափոխման) | 3.2. The main features of the credit **transfer** function are:<br>• Academic programs, in which the workload for all components (courses, term papers, graduation papers, internships, etc.) is expressed in ECTS credits, reflecting the student's full learning load (curricular, extracurricular, and independent).<br>• Mutual recognition of learning outcomes expressed in credits, along with the opportunity to transfer a certain number of credits between programs within the same university or across universities, in accordance |

| | |
|---|---|
| հնարավորություն նույն բուհի ներսում կամ բուհերի միջև՝ ընդունող ծրագրի պահանջներին համապատասխան: | with the requirements of the host program. |
| 3.3. Կրեդիտների **կուտակման** գործառույթի հիմնական հատկանիշներն են. <br>• ուսումնական ծրագիրը բաղկացած է ինչպես պարտադիր, այնպես էլ ընտրովի դասընթացներից, որոնց յուրացման հաջորդականությունը սահմանափակվում է միայն դասընթացների նախապայմաններով, <br>• ուսանողների կողմից դասընթացների ընտրության և դրանցում ընդգրկվելու համար գրանցման ընթացակարգերի առկայություն, <br>• ուսանողների ուսումնառության անհատական ծրագրերի առկայություն, <br>• դասընթացի համար մեկից ավելի ուսումնական հոսքերի առկայության դեպքում ուսանողի կողմից դրանց ընտրության հնարավորություն՝ կախված դասընթացի կայացման ժամանակացույցից և/կամ դասախոսի նախապատվությունից: | 3.3. The main features of credit **accumulation** are: <br>• The curriculum consists of both compulsory and elective courses, with the learning sequence of courses limited only by the prerequisite of the courses. <br>• The availability of the registration procedures for course selection and enrollment by students <br>• The availability of individualized study programs for students <br>• When multiple courses are offered within a particular academic stream, students may choose them based on their schedule and/or preferred lecturer. |
| 4. **ՈՒՍԱՆՈՂԻ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԾԱՆՐԱԲԵՌՆՎԱԾՈՒԹՅԱՆ ՆՈՐՄԱՏԻՎՆԵՐԸ** | **4.** ***STANDARDS OF STUDENT WORKLOAD*** |
| 4.1. Տարեկան աշխատածավալը և ուսումնական բեռնվածությունը. | 4.1. Annual workload and learning load. |
| 4.1.1. 1 ECTS կրեդիտը համարժեք է ուսանողի 30 լրիվ (լսարանային, արտալսարանային և ինքնուրույն) ուսումնական ծանրաբեռնվածությանը: | 4.1.1. 1 ECTS credit is equivalent to a student's full learning load of 30 hours, including curricular, extracurricular, and independent work. |
| 4.1.2. Ուսումնական տարվա տևողու-թյունը 52 շաբաթ է, որից առնվազն 32-ը տրամադրվում է ուսումնական պարապ-մունքներին: Ուսումնական գործընթացը կազմակերպվում է 2 կիսամյակում: Ուսումնական պարապմունքները իրականացվում են 16-ական շաբաթ՝ յուրաքանչյուր կիսամյակում: ՀԵՀ-ում ուսումնական տարին տրամադրվում է ուսումնական պարապմունքներին, քննաշրջանին, արձակուրդներին և կրթական այլ մոդուլներին: | 4.1.2. The duration of the academic year is 52 weeks, of which at least 32 weeks are dedicated to teaching. The educational process is organized into two semesters, with classes held for 16 weeks in each semester. The academic year at the European University of Armenia (EUA) includes academic courses, exam periods, vacations, and other educational modules. |

| | |
|---|---|
| 4.1.3. Ուսանողի շաբաթական ուսում-նական լրիվ ծանրաբեռնվածությունը առավելագույն 45 ակադեմիական ժամ է, որը համարժեք է 1.5 ECTS կրեդիտի: | 4.1.3. A student's maximum weekly learning load is 45 academic hours, which is equivalent to 1.5 ECTS credits. |
| 4.1.4. Բակալավրի կրթական ծրագրում ուսանողի շաբաթական լսարանային ծանրաբեռնվածությունը, կարող է կազմել 23-30 ժամ, իսկ մագիստրոսի կրթական ծրագրում՝ 15-22 ժամ: | 4.1.4. In the bachelor's degree academic program, the student's weekly classroom load may range from 23 to 30 hours, while in the master's degree academic program, it may range from 15 to 22 hours. |
| 4.1.5. Առկա ուսուցման համակարգում ընդգրկված ուսանողը կիսամյակում պետք է ունենա 30 ECTS կրեդիտ, իսկ մեկ ուսումնական տարում՝ 60 ECTS կրեդիտ ուսումնական ծանրաբեռնվածություն (10% թույլատրելի շեղումով): | 4.1.5. A student enrolled in the full-time educational system must earn 30 credits per semester and 60 credits per academic year, with a permissible deviation of 10%. |
| 4.1.6. Հեռակա ուսուցման համակարգում ընդգրկված ուսանողը կիսամյակում պետք է ունենա 24 ECTS կրեդիտ, իսկ մեկ ուսումնական տարում՝ 48 ECTS կրեդիտ ուսումնական ծանրաբեռնվածություն (10% թույլատրելի շեղումով): | 4.1.6. A student enrolled in the part-time educational system must earn 24 credits per semester and 48 credits per academic year, with a permissible deviation of 10%. |
| 4.2. Կրեդիտների հատկացումը. | 4.2. The allocation of credits: |
| 4.2.1. Կրթական ծրագրի առանձին դասընթացներին կրեդիտների հատկացումը ելնում է դասընթացով սահմանված կրթական արդյունքին հասնելու համար միջին մակարդակի ուսանողից պահանջվող աշխատաժամանակի (լրիվ ուսումնական բեռնվածության) իրատեսական կանխատեսումից: | 4.2.1. The allocation of credits for individual courses in the curriculum is based on a realistic estimation of time the average student (full learning load) needs to spend to achieve the educational outcomes specified by the course. |
| 4.2.2. Հատկացվող կրեդիտների թվի և լսարանային (կոնտակտային) ժամերի միջև չկա միարժեք կապ: Կրեդիտների թիվը կախված է նաև պարապմունքների ձևից (դասախոսություն, սեմինար, գործնական կամ լաբորատոր պարապմունք և այլն), դասավանդման, ուսումնառության և գնահատման մեթոդներից և այլն: | 4.2.2. There is no direct connection between the number of allocated credits and classroom (contact) hours. The number of credits is determined by the type of training (such as lectures, seminars, practical, or laboratory sessions), as well as the teaching, learning, and assessment methods used. |
| 4.2.3. Ուսանողի ուսումնական աշխատանքի համար պահանջվող ժամաքանակը պետք է համապատասխանի դասընթացին հատկացված կրեդիտների ժամային համարժեքին: | 4.2.3. The amount of time required for the student's learning load must correspond to the time equivalent of the credits allocated for the course. |

| | |
|---|---|
| 4.2.4. Դասընթացին հատկացվող կրեդիտները պետք է ունենան ամբողջական արժեքներ՝ ուսումնական ծրագրի մանրատվածության վտանգից խուսափելու և դասընթացների ընտրությունը (այդ թվում նաև այլ կրթական ծրագրերից) դյուրացնելու նպատակով: | 4.2.4. The credits allocated for the course should be whole numbers to avoid the risk of curriculum fragmentation and to facilitate course selection (including those from other academic programs). |
| 4.2.5. Ուսանողի կողմից մասնագիտական կրթական ծրագրի ընդհանուր կրթական արդյունքներին համապատասխան գիտելիքների, հմտությունների և կարողությունների ձեռքբերումը հաստատվում է ամփոփիչ ատեստավորման կատարումով և պաշտպանությամբ: | 4.2.5. The student's acquisition of knowledge, skills, and abilities which correspond to the general educational outcomes of the professional educational program is confirmed through the performance and defense of the final certification. |
| 4.3. Բակալավրի կրթական ծրագրի ուսումնական լրիվ աշխատածավալը 240 ECTS կրեդիտ է, մագիստրոսի կրթական ծրագրի ուսումնական լրիվ աշխատածավալը 120 ECTS կրեդիտ է: | 4.3. The full-time bachelor's degree program requires 240 credits, while the full-time master's degree program requires 120 credits. |
| 4.4. Ուսանողի ծանրաբեռնվածությունն ընդգրկում է.<br>• դասախոսություններին, գործնական և լաբորատոր պարապմունքներին, պրակտիկաներին մասնակցությունը,<br>• ստուգումների հանձնումը,<br>• անհատական պարապմունքները,<br>• անհատական, կուրսային, ավարտական և ուսումնական պլանով նախատեսված այլ աշխատանքները: | 4.4. The workload of the student includes:<br>• Participation in lectures, practical and laboratory training, and internships<br>• Taking exams<br>• Individual training<br>• Individual, course, graduation, and other curricular work |
| 4.5. Ուսանողի ծանրաբեռնվածության կառուցվածքը և ծավալը սահմանվում է լսարանային, անհատական և ինքնուրույն աշխատանքների ժամերի չափաբաժիններից ելնելով: ԶԵՅ-ում սահմանվում է հետևյալ նորմատիվները.<br>ա) Լսարանային ժամերի քանակը հավասար է տվյալ դասընթացի շաբաթական ժամերի քանակx16:<br>բ) Ուսանողի ինքնուրույն աշխատանքը ներառում է դասախոսի խորհրդատվությամբ արտալսարանային աշխատանքը (օրինակ՝ անհատական առաջադրանքին առնչվող դասախոսի խորհրդատվությունները) և առանց դասախոսի խորհրդատվության արտալսարանային աշխատանքը, օրինակ՝ սեմինարներին, գործնական | 4.5. The structure and volume of a student's workload are determined based on curricular, extracurricular, and independent hours. The following standards are defined in the EU:<br>a) The number of curricular hours is equal to the number of hours per week for the course multiplied by 16.<br>b) Individual work hours for students include extracurricular activities with the lecturer's guidance (e.g., advice on individual tasks) as well as extracurricular activities without the lecturer's guidance, such as preparation for seminars, practical training, tests, and exams. |

| | |
|---|---|
| պարապմունքներին, ստուգարքներին, քննությունններին պատրաստվելը: | |
| 4.6. Լսարանային և ինքնուրույն ժամերը գտնվում են հետևյալ կապի մեջ՝<br><br>**ՏՎՅԱԼ ԴԱՍԸՆԹԱՑԻ ՀԱՄԱՐ ՈՒՍԱՆՈՂԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺԱՄԱՅԻՆ ԾԱՆՐԱԲԵՌՆՎԱԾՈՒԹՅՈՒՆ = ԴԱՍԸՆԹԱՑԻ ԿՐԵԴԻՏ X 30 ԼՐԻՎ ԺԱՄ = ԼՍԱՐԱՆԱՅԻՆ ԺԱՄԵՐ + ԻՆՔՆՈՒՐՈՒՅՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԺԱՄԵՐ** | 4.6. Curricular and independent hours are defined as follows:<br><br>**STUDENT’S TOTAL GENERAL TIME WORKLOAD FOR THE GIVEN COURSE = COURSE CREDIT X 30 FULL HOUR = CLASS HOURS + INDIVIDUAL WORK HOURS** |
| 5. **ԿՐԵԴԻՏԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՏԱՐՐԵՐԸ ԵՎ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԵՐԸ** | **5. THE ELEMENTS AND PROCEDURES OF CREDIT SYSTEM** |
| 5.1. Կրեդիտային հենքով ուսումնական պլանը. | 5.1. Credit-based curriculum: |
| 5.1.1. Կրեդիտային հենքով ուսումնական պլաններում հաշվի են առնվում ուսանողի ծանրաբեռնվածության 4.4 ենթակետում ներկայացված տարրերը: | 5.1.1. In credit-based curricula, the elements outlined in section 4.4 regarding student workload are taken into account. |
| 5.1.2. Ուսումնական պլանում յուրաքանչյուր դասընթացի համար նշվում է նրա թվանիշը, լրիվ անվանումը, հատկացված կրեդիտների քանակը, պարապմունքի իրականացման ձևը, կիսամյակի համարը և գնահատման ձևը: | 5.1.2. In the curriculum each course includes the course number, full name, awarded credits, type of training, semester number, and assessment method. |
| 5.1.3. Մասնագիտության ուսումնական պլանը ներկայացվում է համապատասխան կրթական կառուցամասերում խմբավորված դասընթացների ցանկով: Կրթական կառուցամասերի քանակը և անվանումները սահմանում է համալսարանը: | 5.1.3. The curriculum for each specialty is presented as a list of courses grouped within the corresponding educational structures. The number and titles of these educational structures are determined by the university |
| 5.1.4. ՀԵՀ-ում բակալավրի դասընթացներին կրեդիտներ ամրագրվել են հետևյալ կրթական կառուցամասերի տարբերակմամբ.<br>ա) ընդհանուր կրթական կառուցամաս (40-45 ECTS կրեդիտ), որի մեջ ներառված են պարտադիր և կամընտրական դասընթացներ,<br>բ) մասնագիտական կառուցամաս (155-165 ECTS կրեդիտ), որի մեջ ներառված են պարտադիր և կամընտրական դասընթացներ: | 5.1.4. Credits for bachelor's courses at the EUA are assigned based on the following educational structures:<br>a) **General Educational Structure** (40-45 ECTS credits), which includes compulsory and elective courses.<br>b) **Professional Structure** (155-165 ECTS credits), which includes compulsory and elective courses.<br>c) **Other Educational Modules** (35-40 ECTS credits), which includes coursework, internships, and final certification. |

| | |
|---|---|
| գ) այլ կրթական մոդուլներ (35-40 ECTS կրեդիտ), այդ թվում՝ կուրսային աշխատանք, պրակտիկաներ և ամփոփիչ ատեստավորում: | |
| 5.1.5. ՀԵՀ-ում մագիստրատուրայի դասըն-թացներին կրեդիտներ ամրագրվել են հետևյալ կրթական կառուցամասերի տարբերակմամբ.<br>ա) Մասնագիտական կառուցամաս (80 ECTS կրեդիտ), որի մեջ ներառված են պարտադիր և կամընտրական դասընթացներ,<br>բ) հետազոտական կառուցամաս (22 ECTS կրեդիտ):<br>գ) ամփոփիչ ատեստավորում (18 ECTS կրեդիտ): | 5.1.5. Credits for master's courses at the EUA are assigned based on the following educational structures:<br>a) **Professional Structure** (80 ECTS credits), which includes compulsory and elective courses.<br>b) **Research Structure** (22 ECTS credits).<br>c) **Summative Certification** (18 ECTS credits). |
| 5.2. Դասընթացները. | 5.2. Courses: |
| 5.2.1. Դասընթացները բաժանվում են 2 հիմնական խմբերի՝ պարտադիր և կամընտրական: | 5.2.1. Courses are divided into two main groups: compulsory and elective. |
| 5.3. Կամընտրական դասընթացների համակարգը. | 5.3. The system of elective course |
| 5.3.1. ՀԵՀ-ում կամընտրական դասընթացների համակարգը գործում է հետևյալ փուլերով.<br>● դասընթացների ընտրություն ուսանողների կողմից<br>● ընտրված դասընթացների ներառում տարեկան ծանրաբեռնվածության մեջ | 5.3.1. The system of elective courses at the EU operates in the following stages:<br>● **Selection of Courses by Students**<br>● **Inclusion of Selected Courses in the Annual Workload** |
| 5.3.2. Կամընտրական դասընթացներն արտացոլված են ուսումնական պլաններում:<br>ա) Յուրաքանչյուր կամընտրական դասընթաց մատուցվում է մեկ կիսամյակի ընթացքում:<br>բ) Մասնագիտական ամբիոնի ներկայացրած կամընտրական դասընթացներից ուսանողը պետք է ընտրի որևէ դասընթաց կամ դասընթացներ, որոնք պետք է պարունակեն նույն ժամաքանակով և նույնատիպ ժամային կառուցվածքով դասընթացներ:<br>գ) Միասնական համակարգով, համապատասխան նորմատիվներով կամընտրական դասընթացներ կարող են ներդրվել բոլոր մասնագիտությունների ուսանողների համար ինչպես ընդհանուր, այնպես էլ մասնագիտական կրթական կառուցամասերում: | 5.3.2. Elective courses are represented in the curricula as follows:<br>a) Each elective course is delivered within one semester.<br>b) Students must select one or more courses from the elective courses, provided by the Professional Chair, ensuring that the selected course or courses have the same hours and structure.<br>c) Elective courses, with a unified system and relevant norms, can be implemented for students of all specialties, within both general and professional educational structures.<br>d) The curriculum lists the names of courses available for selection. If the Chair plans to have one elective course then at least two elective courses must be offered. The Chair may plan to provide two or more elective |

| | |
|---|---|
| դ) Ուսումնական պլանում ընդգրկված ցանկերով թվարկվում են այն դասընթացների անվանումները, որոնցից պետք է կատարվի ընտրությունը: Եթե տվյալ խմբում ամբիոնի կողմից նախատեսվել է մեկ կամընտրական դասընթաց, ապա պետք է առաջադրվի առնվազն երկու կամընտրական դասընթացի անվանում: Ամբիոնը կարող է նախատեսել առնվազն երկու և ավելի կամընտրական դասընթաց: Երկու կամընտրական դասընթաց ընտրելու համար պետք է առաջարկել երեք և ավելի դասընթաց, որից կկատարվի երկու դասընթացի ընտրություն: Երեք կամընտրական դասընթացի համար պետք է առաջարկվի առնվազն չորս դասընթաց և այլն:<br>ե) Կամընտրական դասընթացների փոխարեն ուսանողի ծանրաբեռնավծությունում կարող է ներառվել շարժունության արդյունքում ուսումնասիրված առարկան՝ համապատասխան կրեդիտով, որը արտացոլվում է ուսումնական պլանում: | courses. To select two elective courses, at least three options must be available; for three elective courses, at least four options must be provided, and so on.<br>e) Instead of elective courses, a subject studied during the mobility period may be included in the student's workload, with corresponding credits reflected in the curriculum. |
| 5.3.4.Կամընտրական դասընթացներին գրանցվելու գործընթացը կազմակերպվում է համապատասխան ամբիոնների կողմից հետևյալ ընթացակարգով՝<br>ա) Մասնագիտական ամբիոնների կողմից ներկայացվում են կամընտրական դասընթացների ծրագրերը, ընտրության պայմանները (ներկայացված դասընթացներից քանիսը պետք է ընտրվի) հաջորդ ուսումնական տարվա երկու կիսամյակների համար: Կամընտրական դասընթացների վերաբերյալ տեղեկատվությունը հասանելի է լինում ուսանողներին:<br>բ) Անհրաժեշտության դեպքում մասնագիտական ամբիոնի ներկայացուցչի կողմից, ընտրությունն առավել արդյունավետ դարձնելու նպատակով, դասընթացների բովանդակությունը մանրամասնորեն ներկայացվում է ուսանողներին:<br>գ) Ուսանողների գրանցումը կատարվում է տեղեկատվությունը ուսանողներին տալուց հետո 2 շաբաթվա ընթացքում:<br>դ) Յուրաքանչյուր ակադեմիական խումբ կամընտրական դասընթացներ ուսումնասիրելու նպատակով կարող է բաժանվել առավելագույնը երկու խմբի, որոնցից յուրաքանչյուրը | 5.3.4. The process of enrolling in elective courses is organized by the respective Chair according to the following procedure:<br>a) Professional Chairs present the programs of elective courses and selection criteria (multiple courses must be selected) for both semesters of the upcoming academic year. Information regarding elective courses is available to students.<br>b) If necessary, a representative of the Professional Chair provides detailed explanations of the course contents to make selection of the course easier for the students.<br>c) Student registration takes place within two weeks after the information is provided to students.<br>d) Each academic group may be divided into a maximum of two groups for the study of elective courses, with each group studying a different elective course.<br>e) An elective course will take place if at least 10 students are registered in the vocational structure or 25 students in the general educational structure. If the number of registered students fall below these |

| | |
|---|---|
| կուսումնասիրի առանձին կամընտրական դասընթաց:<br>ե) Տվյալ կամընտրական դասընթացը կկայանա, եթե գրանցվել է ոչ պակաս, քան 10 ուսանող՝ մասնագիտական կառուցամասի դասընացների դեպքում, 25 ուսանող՝ ընդհանուր կրթական կառուցամասի դասընթացների դեպքում, հակառակ դեպքում՝ տվյալ դասընթացին գրանցված փոքրաթիվ ուսանողներին կառաջարկվի միանալ որևէ կայացած խմբի: | thresholds, they will be offered the option to join an established group. |
| 6. **ԳՆԱՀԱՏՄԱՆ ԲԱԶՄԱԳՈՐԾՈՆԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ** | ***6. MULTIFUNCTIONAL ASSESSMENT SYSTEM*** |
| 6.1. Ուսանողի գիտելիքների գնահատման բազմագործոնային մոտեցումը կրեդիտային համակարգում խիստ կարևորվում է: Գնահատման այս համակարգի էությունն այն է, որ որոշակի դասընթացի գծով ուսանողի ամփոփ գնահատականը ձևավորվում է կիսամյակի ընթացքում, գնահատման գործոնների և դրանց կշիռների հիման վրա՝ հաշվի առնելով հաճախումները, միջանկյալ և ամփոփիչ ստուգումները, անհատական կամ հետազոտական աշխատանքը, ընթացիկ ակտիվությունը և արտալսարանային աշխատանքը (հավելված 1): Գործոնները գնահատվում են 100 միավորային համակարգով: Գնահատման այլ համակարգի հետ համեմատման համար որպես ուղեցույց կարող է ծառայել հավելված 2-ը: | 6.1. The multifunctional approach to assessing student knowledge within the credit system is crucial. This assessment system operates on the principle that a student's final grade for a particular course is determined over the semester, based on various grading factors and their respective weights. These factors include attendance, midterm and final exams, individual work, research paper, current activity, extracurricular work (see Appendix 1).<br>Factors are assessed using a 100-point grading system. Appendix 2 can serve as a guide for comparison with other assessment systems. |
| 6.2. Կիսամյակի ընթացքում, ուսումնական գործընթացին զուգահեռ, փուլերով կատարվում է գիտելիքի ստուգման և գնահատականի ձևավորման գործընթաց: | 6.2. Throughout the semester, alongside the teaching process, the knowledge assessment and grade formation processes are conducted in stages |
| 6.3. Կիսամյակի ընթացքում իրականացվում է գիտելիքների ստուգում և բացակայությունների գրանցում: Կիսամյակի վերջում, նախքան ամփոփիչ ստուգումը կատարվում է ուսանողի հաճախումների, անհատական աշխատանքի և ընթացիկ ակտիվության և արտալսարանային աշխատանքների գնահատում: | 6.3. Throughout the semester, knowledge assessments are conducted, and absences are recorded. At the end of the semester, prior to the final examination, the student's attendance, individual work, current activity, and extracurricular work are evaluated. |
| 6.4. Ամփոփիչ քննաշրջանից հետո ձևավորվում է վերջնական հաշվարկային գնահատականը և դրական նվազագույն շեմը | 6.4. After the final exam, a final grade is determined, and remediation is organized for students who do not meet the minimum passing threshold. |

| | |
|---|---|
| չհաղթահարած ուսանողների համար կազմակերպվում է լուծարք: | |
| 6.5. Ընթացիկ ակտիվությունը (սեմինար, գործնական և լաբորատոր պարապմունքներ). | 6.5. Current Activity (Seminars, Practical, and Laboratory Training) |
| 6.5.1. Ընթացիկ ակտիվությունը գնահատվում է 100 միավորային համակարգով դասախոսի կողմից կիսամյակի վերջում (մեկ անգամ)՝ հիմք ընդունելով կիսամյակի ընթացքում սեմինար, գործնական և լաբորատոր պարապմունքների միջին արդյունքները: | 6.5.1. Current activity is assessed on a 100-point system by the lecturer, at the end of the semester (once), based on the average results of seminars, practical training and laboratory work throughout the semester. |
| 6.5.2. Ընթացիկ ակտիվության գնահատականի վրա ազդում է ուսանողների հաճախումները.<br>ա) Հաճախումները հաշվառվում են դասախոսությունների, գործնական և սեմինար պարապմունքների ժամանակ՝ դեկանատի կողմից տրամադրված մատյաններում:<br>բ) Հաճախումների հաշվառման համար պատասխանատու է դասախոսը, նա է կատարում համապատասխան գրանցումներ մատյանում:<br>գ) Հաճախումների վերաբերյալ գրանցումները վերահսկում է ֆակուլտետի դեկանը:<br>դ) «Հաճախումներ» չափորոշչի գնահատականը հաշվարկվում է ըստ հավելված 3-ի:<br>ե) Հաճախումների ցուցանիշն անդրադառնում է «Ընթացիկ ակտիվության և արտալսարանային աշխատանքի» չափորոշիչի գնահատման վրա ըստ աղյուսակ 5-ի: | 6.5.2. Student attendance affects the assessment of their current activity:<br>a) Attendance is recorded during lectures, practical sessions, and seminars in the registers provided by the Dean's office.<br>b) The lecturer is responsible for recording attendance and making the appropriate entries in the register.<br>c) Attendance records are supervised by the Dean of the Faculty.<br>d) The score for the "Attendance" criterion is calculated according to Appendix 3.<br>e) The attendance rate impacts the assessment of the “Current Activity and Extracurricular Work” criterion, as outlined in Table 5. |

Աղյուսակ /Table 5.

| **Հաճախում-ների ցուցանիշը / Attendance Score** | **Ընթացիկ ակտիվության (և արտալսարանային աշխատանքի) նվազագույն գնահատականը / Minimum Score for Current Activity (and Extracurricular Work)** | **Ընթացիկ ակտիվության (և արտալսարանային աշխատանքի) առավելագույն գնահատականը / Maximum Score for Current Activity (and Extracurricular Work)** |
|---|---|---|
| 100% | 30 | 100 |
| 85-99% | 20 | 100 |
| 80-84% | 10 | 90 |
| 70-79% | 0 | 80 |
| 60-69% | 0 | 70 |
| 50-59% | 0 | 60 |
| 40-49% | 0 | 50 |
| 30-39% | 0 | 40 |
| 20-29% | 0 | 30 |
| 10-19% | 0 | 20 |

| | | |
|---|---|---|
| 0-9% | 0 | 0 |

| | |
|---|---|
| ե) Եթե «Ընթացիկ ակտիվության և արտալսարանային աշխատանքի» հաշվարկված գնահատականը փոքր է աղյուսակում նշված նվազագույն գնահատականից, ապա հիմք է ընդունվում աղյուսակում նշված նվազագույն սահմանը, իսկ եթե «Ընթացիկ ակտիվության և արտալսարանային աշխատանքի» հաշվարկված գնահատականը մեծ է աղյուսակում նշված առավելագույն սահմանից, ապա հիմք է ընդունվում նշված առավելագույն սահմանը:<br>է) Երկարաժամկետ հարգելի բացակայության դեպքում, դեկանի ներկայացմամբ, ռեկտորատը կարող է կայացնել հատուկ որոշում: | f) Should the calculated score for 'Current Activity and Extracurricular Work' be lower than the minimum score specified in the table, the minimum score will be applied. Conversely, if the calculated score exceeds the maximum score in the table, the maximum score will be applied<br>g) In the case of a long-term excused absence, the rectorate may make a special decision based on the Dean's presentation |
| 6.5.3. Գնահատման արդյունքները, կիսամյակի վերջում՝ ամփոփիչ քննաշրջանից առաջ, արձանագրվում են գնահատման ամփոփագրում (տե՛ս հավելված 4.) | 6.5.3. Assessment results are recorded in the assessment report at the end of the semester, prior to the final examination period (see Appendix 4). |
| 6.5.4. Կիսամյակի ընթացքում մատյանում դասախոսը կատարում է ուսանողի ընթացիկ ակտիվության վերաբերյալ նշումներ, որոնց հիման վրա էլ հաշվարկվում է ընթացիկ ակտիվության կիսամյակային ամփոփ գնահատականը: | 6.5.4. Throughout the semester, the lecturer records observations of the student's current activity, which are used to calculate the semester assessment for Current Activity. |
| 6.5.5. Ընթացիկ ակտիվությունը գնահատվում է տվյալ կիսամյակի ընթացքում առնվազն 3 գնահատականի հիման վրա՝ առկա ուսուցման համակարգում և 2 գնահատականի հիման վրա՝ հեռակա ուսուցման համակարգում (ընթացիկ գնահատումներն իրականացվում են 100 միավորային համակարգով): | 6.5.5. Current activity is assessed based on at least three grades in the full-time learning system and two grades in the part-time learning system during the semester (current evaluations are conducted on a 100-point grading scale). |
| 6.5.6. Ընթացիկ ակտիվության կիսամյակային ամփոփ գնահատականը հաշվարկվում է որպես երեք և ավելի գնահատականների պարզ միջին թվաբանական՝ առկա ուսուցման դեպքում և երկու և ավելի գնահատականների պարզ միջին թվաբանական՝ հեռակա ուսուցման դեպքում: | 6.5.6. The current semester summative grade is calculated as the simple arithmetic average of three or more grades for full-time training and the average of two or more grades for part-time learning. |
| 6.6. Անհատական կամ հետազոտական աշխատանք. | 6.6. Individual or research paper. |
| 6.6.1. Գիտելիքների գնահատման բազմագործոնային համակարգը հաշվառում և | 6.6.1. The multifunctional knowledge assessment system records and evaluates |

| | |
|---|---|
| արժևորում է ուսանողի անհատական կամ հետազոտական աշխատանքը, որն էական գործոն է տվյալ դասընթացի վերաբերյալ վերջնական գնահատականը ձևավորելիս: | the student's individual or research paper, which is essential for determining the final grade for the course. |
| 6.6.2. Կիսամյակի ընթացքում ուսանողին անհատական կամ հետազոտական աշխատանք է հանձնարարվում մասնագիտական կառուցամասերի դասընթացներից: | 6.6.2. During the semester, the student is assigned an individual or research paper for professional courses. |
| 6.6.3. Անհատական կամ հետազոտական աշխատանքների թեմաները ընդգրկվում են առարկայական ծրագրի մեջ և հաստատվում ամբիոնի կողմից: | 6.6.3. The topics for the individual or research paper are included in the course syllabus and approved by the Chair. |
| 6.6.4. Կիսամյակի ընթացքում տվյալ դասընթացի համար ուսանողին հանձնարարվում է մեկ անհատական կամ հետազոտական աշխատանք: | 6.6.4. During the semester, the student is assigned one individual or research paper for the course. |
| 6.6.5. Անհատական կամ հետազոտական աշխատանքը հանձնարարվում է կիսամյակի առաջին ամսվա ընթացքում: | 6.6.5. The individual or research paper is assigned within the first month of the semester. |
| 6.6.6. Անհատական կամ հետազոտական աշխատանքների թեմաները չեն կարող կրկնվել նույն խմբի ուսանողների համար: | 6.6.6. Individual or research paper topics cannot be repeated for students within the same group. |
